“ԿՈՄԻՏԱՍ – 150” ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ *

Բանալի բառեր՝ Կոմիտաս, կոմիտասագիտություն, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտե, գիտական նստաշրջան, հայ երաժշտություն:

Տասնամյակներ շարունակ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը կոմիտասագիտության ճանաչված կենտրոնն է և ծանրակշիռ ներդրում ունի Կոմիտասի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության ու հրատարակման գործում: Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանին նվիրված՝ 1969 թ. նոյեմբերի 17-ին ՀՍՍՀ ԳԱ նիստերի դահլիճում Արվեստի ինստիտուտի, Հայաստանի կոմպոզիտորների միության և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գումարած գիտական միացյալ նստաշրջանում ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը բացման խոսքում ասաց. “Կոմիտասը հավաքեց հայ ժողովրդական երգերն ու մեղեդիները, մաքրեց դրանք անհարազատ նստվածքներից, մեծագույն վարպետությամբ մշակեց և այդպիսով ստացված շողշողուն, հղկված ադամանդի բյուրեղները վերադարձրեց ժողովրդին: Այդ անզուգական հարստությունը ընդմիշտ մտավ մեր մշակույթի գանձարանը՝ որպես նրա կարևորագույն մասը”[1]:

Կոմիտասի ժառանգության ուսումնասիրությունն Արվեստի ինստիտուտում դեպքից դեպք, հոբելյանից հոբելյան չի իրականացվում: Այն ինստիտուտի մշտական հետաքրքրությունների կենտրոնում է: Եվ, այդուամենայնիվ, 2019 թ. նրա համար անցավ կոմիտասյան նշանաբանի ներքո, ու ինստիտուտի գիտական գործունեության առանցքը կազմեցին կոմիտասագիտական միջոցառումները, որոնք կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ գիտական նստաշրջաններ և գիտական հրապարակումներ:

Հոբելյանական միջոցառումների եզրափակիչ ակորդը դարձավ Արվեստի ինստիտուտի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ, ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ, 2019 թ. նոյեմբերի 29–30-ը գումարված “Կոմիտաս–150” գիտական նստաշրջանը, որի արդյունքները կարևոր հանգրվան դարձան կոմիտասագիտության զարգացման արդի փուլում: Հայաստանի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ գումարվեց գիտական նստաշրջան, որի բոլոր զեկուցումների առանցքում բացառապես Կոմիտասի կյանքն ու գործունեությունն էր, ինչպես նաև՝ նրա կերպարը հայ արվեստում ու գրականության մեջ:

---

* *Ներկայացվել է 16. III. 2020 թ., ընդունվել է տպագրության 27. III. 2020 թ.:*

[1] *Տե՛ս Ա. Ծ ա տ ո ւ ր յ ա ն. Կոմիտասի ծննդյան 100-ամյակի տոնակատարությունը.–ՊԲՀ, 1970, № 1, էջ 263:*

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին Արվեստի, Մ. Աբեղյանի անվան գրականության, Պատմության ինստիտուտների, Մատենադարանի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երևանի պետական համալսարանի գիտնականներն ու դասախոսները:

Նստաշրջանի բացումն ու լիագումար նիստը տեղի ունեցան նոյեմբերի 29-ին ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը*:*

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության խոսքը հաղորդեց Մայր Աթոռի Կոմիտաս Վարդապետի և Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակներին նվիրված միջոցառումների կազմակերպման հոբելյանական հանձնախմբի ատենապետ, պ. գ. դ., պրոֆ. Գերաշնորհ Տ. Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը*:*

Գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի ողջույնի խոսքը ներկայացրեց կոմիտեի գլխավոր քարտուղար, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Լևոն Մարդոյանը*:*

Լիագումար նիստում (նախագահ՝ ակադեմիկոս Յու. Սուվարյան), արվ. դ., պրոֆ. Աննա Ասատրյանը *“Կոմիտասը և հայ երաժշտության հետագա ընթացքը” բանախոսության մեջ մի կողմից բացահայտեց, որ Կոմիտասն իր ստեղծագործական ոչ երկարատև կյանքի ընթացքում ծավալել է բազմակողմանի ու արդյունաշատ գործունեություն՝ մեծապես կանխորոշելով հայ երաժշտության զարգացման հետագա ուղիները, իսկ մյուս կողմից՝ առաջին անգամ անդրադարձավ այն բացառիկ դերին, որն ունեցել է Կոմիտասի կերպարը հայ արվեստում: Հայ երաժշտության մեջ ստեղծվեցին նրան նվիրված արժեքավոր ստեղծագործություններ. նա այն եզակի հայ կոմպոզիտորներից է, ում կերպարը մարմնավորվեց երաժշտական թատրոնում, խթանեց հայ գրականության առաջընթացը ևս. նրան են նվիրվել բազմաթիվ չափածո ու արձակ ստեղծագործություններ: Կոմիտասը նպաստեց հայ կերպարվեստի զարգացմանը. նրա կերպարին են անդրադարձել հայ նկարիչներից ու քանդակագործներից շատերը թե՛ նրա կենդանության օրոք, թե՛ հետագայում:*

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Ասողիկ աբեղա Կարապետյանը *“Սուրբ Էջմիածնի վարդապետը” վերնագրով զեկուցման մեջ նկատեց, որ տարբեր մենագրություններում և գիտական հոդվածներում Կոմիտասը ներկայացվել է որպես հալածյալ: Սակայն Հայաստանի ազգային արխիվում գտնվող մի շարք վավերագրերի ուսումնասիրության արդյունքում բանախոսը պարզել է՝ Կոմիտաս Վարդապետը ոչ թե հալածվել է, այլ զոհ է դարձել այն մթնոլորտի, որը ձևավորվել էր Արևելյան Հայաստանում, ի մասնավորի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, որը պետականության բացակայության պայմաններում ազգահավաք և ազգապահպան առաքելություն էր իրականացնում:*

1909 թ. ֆրանսիացի արևելագետ-հայագետ Ֆրեդերիկ Մակլերն այցելել է Էջմիածին, ծանոթացել Կոմիտասի հետ և նրա մասին բացառիկ հուշեր թողել իր ուղեգրության մեջ, ինչպես նաև՝ "Երաժշտությունը Հայաստանում" արժեքավոր գրքույկում: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը *"Ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը Կոմիտասի մասին" վերնագրով զեկուցման մեջ գիտական շրջանառության մեջ դրեց Կոմիտասի անձին ու գործին Մակլերի տված գնահատականները, որոնք, ինչպես նկատեց բանախոսը, "կոմիտասագիտության համար մշտապես արդիական են":*

Նստաշրջանի լիագումար նիստը եզրափակեց Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բ. գ. դ. Վարդան Դևրիկյանը՝ *Կոմիտասի և Մ. Աբեղյանի մարդկային ու ստեղծագործական առնչությունները լուսաբանող զեկուցմամբ: 1885-ին Սողոմոն Սողոմոնյանը ծանոթանում է Գևորգյան ճեմարանի լսարանականի շրջանավարտ Մ. Աբեղյանի հետ: Մոտ մեկ տարի անց՝ 1886-ին, վերջինիս խոսքերով Սողոմոնը գրում է "Սիփանա քաջեր" խմբերգը, որով միշտ եզրափակում էր իր կազմած խմբական երգեցողությունները: Հետագայում գրականագետը, ի պատասխան Կոմիտասի անհիմն քննադատներին, գրում է "Կոմիտաս վարդապետ և յուր գործը" ("Նոր-դար", 1903, թիվ 119, 120, 121) ու "Ժողովրդական երգարան" և "Հազար ու մի խաղ" ("Արարատ", 1904) հոդվածները, իսկ հետագայում՝ "Հիշողություններ Կոմիտասի մասին" արժեքավոր հուշագրությունը:*

Այնուհետև գիտական նստաշրջանի նիստերը շարունակվեցին Արզականում՝ ԳԱԱ գիտաժողովների տանը:

Առաջին նիստը (համանախագահներ՝ ԳԱԱ թղթակից անդամներ Արարատ Աղայան ու Աելիտա Դոլուխանյան) մեկնարկեց Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվ. դ., պրոֆ. Լիլիթ Երնջակյանի *"Կոմիտասը և հայ աշուղական երգարվեստը" զեկուցմամբ, որը նվիրված էր հայ երաժշտագիտության մեջ գրեթե չուսումնասիրված ոլորտներից մեկի՝ հայ աշուղական արվեստի ծագումնաբանական և գեղարվեստական հիմքերի մեկնաբանմանը՝ Կոմիտասի հոդվածներում ձևակերպված ազգային երաժշտական ինքնության պատկերացումներին առնչվող դատողությունների լույսի ներքո: Կարևորելով Կոմիտասի բազմաբնույթ ստեղծագործական հետաքրքրությունների դաշտում ընդգրկված միջնադարյան գուսանական, աշուղական և քաղաքային ժողովրդական երաժշտության բարձրարժեք նմուշներն ու դրանց ինքնատիպ մարմնավորումները Կոմիտասի անավարտ երաժշտաբեմական ներկայացումներում՝ Երնջակյանն արտահայտեց այն միտքը, որ "Կոմիտաս աշուղական արվեստ հարաբերությունում առաջնությունը պետք է տալ Կոմիտաս ստեղծագործող արվեստագետին, և ոչ թե հետազոտողին":*

Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, արվ. դ., պրոֆ. Մհեր Նավոյանը *"Կոմիտասի երաժշտատեսական հայացքների երկու հիմնաղրույթ"*

վերնագրով բանախոսության մեջ նկատեց, որ Կոմիտասի տեսական հայացքներում և ստեղծագործության մեջ նրա առաջարկած հնչյունաշարի ու "Ներդաշնակության հենքի" գաղափարների կանխադրութային նշանակությունը փաստելի է: "Այդ են վկայում կոմիտասյան բազմաձայնության մեջ հաճախ հանդիպող օկտավաների, կվարտաների և կվինտաների առանձին և կրկնապատկված ու բազմապատկված հարմոնիկ կիրառությունները, որոնց արդյունքում ձևավորվել են օկտակորդներ, կվինտակորդներ և կվարտակորդներ, նաև այդ ինտերվալների համակցությամբ ձևավորված ակորդները,– նկատեց բանախոսը: – Դրանք կազմում են կոմիտասյան հարմոնիկ "բառապաշարի" կարևորագույն շերտերից մեկը: Գծային մտածողության տեսանկյունից ևս կոմիտասյան արվեստի հույժ կարևոր և նորարարական գաղափարներից մեկը՝ բազմաձայնակարգայնությունը, կառուցվում է հենց նույն հիմքով ու դրանից բխող տրամաբանությամբ":

Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվ. դ., պրոֆ. Աննա Արևշատյանը *"Տիգրան Մանսուրյանի՝ Կոմիտասին և Հայոց ցեղասպանությանը նվիրված ստեղծագործությունները" զեկուցման մեջ քննության առավ Տ. Մանսուրյանի Ռեքվիեմը (2011), որն իր արժանի տեղն է գրավել վերջին շրջանի կանտատային-օրատորիալ ժանրում ու հաջողությամբ կատարվել աշխարհի տարբեր երկրներում: Կոմիտասին է նվիրված Մանսուրյանի* Sonata da chiesa*-ն ալտի և դաշնամուրի համար (2015), որն առաջին անգամ հնչեց Ստամբուլի այն եկեղեցում, ուր աքսորվելուց առաջ իր վերջին պատարագն է մատուցել Կոմիտասը:*

Նստաշրջանի առաջին նիստը եզրափակվեց հայ հոգևոր երաժշտությանը նվիրված զեկուցումներով: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվ. թ., դոցենտ Լուսինե Սահակյանը *հանդես եկավ "Որոշ դիտարկումներ "Կոմիտաս-եկեղեցի" առնչությունների շուրջ" զեկուցմամբ, իսկ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, արվ. թ.* Արուսյակ Թամրազյանը *լուսաբանեց Կոմիտասի գիտական գործունեության առանձին ուղղություններից մեկը, այն է՝ Կոմիտասի՝ հայ միջնադարյան հոգևոր ժառանգության ուսումնասիրությունները:*

Երկրորդ նիստում (նախագահ՝ արվ. դ. Լիլիթ Երնջակյան), Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ. Սուսաննա Հովհաննիսյանը *"Կոմիտասը թումանյանական վավերագրերում" զեկուցման մեջ ներկայացրեց Կոմիտասի ստեղծագործության, նրա կյանքի և, մասնավորապես, Թումանյանի հետ բարեկամության մասին ուշագրավ ու նորահայտ փաստեր, որոնք պահպանվել են թումանյանական վավերագրերում՝ բանաստեղծի և նրա մասին հոդվածներում, գրած ու ստացած նամակներում, հուշերում, լուսանկարի ընծայագրում, բանաստեղծի ընտանիքի անդամների արխիվներում, պարբերական մամուլի էջերում և այլն: Բանախոսն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց այն փաստը, որ Կոմիտասը 1917 թ. ժամանակի երաժշտական հանրության կողմից միաձայն ընտրվել է Թումանյանի հիմնած*

“Հայկազյան ընկերության” միջոցով ձևավորվող ազգային ակադեմիայի իսկական անդամ:

Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվ. թ. Մարիաննա Տիգրանյանը *“Երկու վարդապետ՝ Կոմիտաս և Սահակ Ամատունի” զեկուցման մեջ նկատեց, որ Սուրբ Էջմիածնի միաբան Սահակ վրդ. Ամատունու և Կոմիտասի փոխհարաբերությունների մասին մեզ գրեթե ոչինչ հայտնի չէ, բացառությամբ՝ իրադարձությունների ականատես, Կոմիտասի դասընկեր Շահան Սիմոնի հուշերի: Վերջինիս վկայությամբ Գևորգյան ճեմարանում սովորելու տարիներին Սահակ Ամատունին Կոմիտասի սիրելի ուսուցիչն է եղել: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ս. Ամատունին և Կոմիտասը հետագայում էլ ջերմ հարաբերություններ են ունեցել. Կոմիտասն Օշականում այցելել է իր ուսուցչին, նրանից ժողովրդական երգեր ձայնագրել: Անկասկած, Ամատունին էլ ուշադիր հետևել է իրեն վաղուց գերազանցած աշակերտի հաջողություններին:*

“Պատմաբանասիրական հանդես”-ի գլխավոր խմբագիր, բ. գ. դ. Անուշավան Զաքարյանը *հիմնավորեց ռուս կոմպոզիտոր Թոմաս Հարտմանի դերը Թիֆլիսում “Կոմիտասի անվան ընկերության” ստեղծման գործում: 1919 թ. փետրվարի սկզբին հանգամանքների բերումով հայտնվելով Թիֆլիսում, նկատեց բանախոսը, շփվելով հայ գրական-մշակութային գործիչների՝ Հովհ. Թումանյանի, Ե. Թադևոսյանի, Սպ. Մելիքյանի, պրոֆ. Զավրիյանի և այլոց հետ՝ Թ. Հարտմանը զբաղվել է հայ ժողովրդական երգարվեստի, նաև՝ Կոմիտասի մասին: Դրա արդյունքը լինում է այն, որ նա սկսում է զբաղվել հայ երաժշտության ռահվիրա Կոմիտասի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրությամբ, տպագրում վերլուծական մի քանի հոդված, դասախոսություններ է կարդում նրա կյանքի ու ստեղծագործության մասին: Ռուս կոմպոզիտորի ջանքերով էլ 1919 թ. մայիսի սկզբին Թիֆլիսում հիմնվում է “Կոմիտասի անվան ընկերություն”-ը: Մայիսի 21-ին Արտիստական ընկերության լեփլեցուն դահլիճում տեղի է ունենում ընկերության կազմակերպած՝ Կոմիտասին նվիրված երեկո-համերգ, որով սկսվում է նրա երկերի պրոպագանդումը և դրամական նպաստի հանգանակությունը: Համերգ-երեկոները Թիֆլիսում կրկնվում են մի քանի անգամ, համերգներ են կազմակերպվում նաև Երևանում, Բաթումում: Ընկերության հիմնումը հայ երաժշտական մշակույթի պատմության հիշարժան էջերից է:*

ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Արմեն Կարապետյանը *հանդես եկավ “Կոմիտաս–Սևակ. ժողովրդի ողբերգությունը որպես անձնական ճակատագիր” վերնագրով զեկուցումով:*

Երկրորդ նիստի աշխատանքները եզրափակեց Արվեստի ինստիտուտի գիտաշխատող Անի Հակոբյանի *“Օրորի ժանրը Կոմիտասի գրառումներում” զեկուցումը, որտեղ հետազոտողն ի մի բերեց, ենթատեսակավորեց ու վերլուծեց Կոմիտասի բանահավաքչական գործունեության ողջ ընթացքում գրառված և Կոմիտասի “Երկերի ժողովածու”-ի ակադեմիական հրատարակության IX–XIV հատորներում իբրև ազգագրական նյութ զետեղված թվով 13 օրոր:*

Երրորդ նիստում (համանախագահներ՝ արվ. դ. Աննա Ասատրյան ու բ. գ. դ. Անուշավան Զաքարյան) Արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվ. թ. Տաթևիկ Շախկուլյանը, *անդրադարձ կատարելով Կոմիտասի ֆոլկլորագիտական գործունեությանը, լուսաբանեց "Կոմիտասը և "Սասնա ծռեր" էպոսի երգերը" թեման: Էպոսի երգերի՝ Կոմիտասի առաջին պահպանված գրառումները վերաբերում են 1900-ականների սկզբին: Դրանք նա գրառել է Նախո Աբրահամյանից, Զատիկ Խապոյանցից և Տիգրան Չիթունուց: Ըստ այդմ, հետազոտողը եզրակացրեց, որ էպոսի երգերի գրառման ավանդույթի հիմքը դրել է Կոմիտասը: Նա ծրագրել էր իրականացնել "Սասնա ծռեր" էպոսի վրա հիմնված օպերային ստեղծագործություն, ինչի վկայությունն են արխիվային ձեռագրերը:*

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. թ., դոցենտ Եվա Մնացականյանը *"Կոմիտասն իր նամակների հայելիում" զեկուցման մեջ ամփոփ վերլուծությամբ ներկայացրեց Կոմիտասի նամակներում առկա հոգեբանության ու մտածողության խտացված այն տիրույթները, որոնցում "Վարդապետը բացահայտվում է իբրև իր միջավայրի ու երկրի զավակ, իբրև համաշխարհային ճանաչման հասած բացառիկ երաժիշտ և իբրև անհատականություն՝ իր մարդկային բարձրակիրթ ներաշխարհով, հոգու մակընթացություններով, դրամատիկ ապրումներով: Նաև մեր օրերի գեղարվեստական գիտակցության տեսանկյունից իմաստավորվում են որոշ դրույթներ":*

Երևանի պետական համալսարանի դասախոս, արվ. թ. Հռիփսիմե Վարդանյանն *անդրադարձավ գծանկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի կերտած Կոմիտասներին: Կոմպոզիտորի 100-ամյակին նվիրված ցուցահանդեսում Ռ. Խաչատրյանն արժանացել է Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության մրցանակին, իսկ Կոմիտասի դիմանկարը զարդարել է նրա հոբելյանին նվիրված ալբոմի շապիկը: Մեծ երգահանին ներկայացնող Խաչատրյանի հաջորդ ստեղծագործությունը Մայր Աթոռի ֆոնդերում պահվող "Կոմիտասը" լևկասն է, որը ստեղծվել է 1988-ին և հետագայում նվիրաբերվել Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ին: Այդ գործը երբևէ չէր ցուցադրվել և առաջին անգամ հանրությանը ներկայացվեց Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանի շրջանակներում անցկացվող "Թանգարանային գիշեր" միջոցառման ընթացքում, նկատեց բանախոսը:*

Բ. գ. թ. Աիդա Մարտիրոսյան-Մարանջյանի *(Մոսկվա) զեկուցումը նվիրված էր Կոմիտասի՝ մի քանի տասնյակ բանաստեղծությունների ուսումնասիրությանը, որոնք նրա կյանքի օրոք չեն հրատարակվել: Բանախոսն ասաց, որ Կոմիտասի բանաստեղծության գրական ակունքներից մեկը հազարամյա ճանապարհ անցած Շարակնոցն է, և, մասնավորապես, նկատեց, որ Կոմիտասի "Քո երազում" բանաստեղծության պատկերային համակարգը հիշեցնում է Սուրբ Տիրամորը փառաբանող շարականները:*

"Կոմիտաս-150" գիտական նստաշրջանը եզրափակեց Աննա Ասատրյանի *"Կոմիտասը Հովհաննես Չեքիջյանի գնահատմամբ և մեկնաբանմամբ" զեկուցումը: Նա նկատեց, որ Մաեստրոն մի կողմից Կոմիտասի խմբերգային արվեստի լավագույն ու անգերազանցելի*

մեկնաբանն է, իսկ մյուս կողմից՝ Կոմիտասի խմբերգային արվեստի անդուլ պրոպագանդիստը Հայաստանում և աշխարհում: Նա իր 869 համերգների ընթացքում մշտապես հնչեցրել է կոմիտասյան խմբերգային երաժշտությունը: Բանախոսը քննության առավ Հովհ. Չեքիջյանի այն հոդվածները, որոնք լույս են տեսել Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ 1969 թ. հանրապետական և համամիութենական մամուլում:

Գիտական նստաշրջանի ավարտին՝ նոյեմբերի 30-ին, տեղի ունեցավ Արվեստի ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվ. դ., պրոֆ. Արարատ Աղասյանի՝ *Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ "Կոմիտաս–150" գիտական նստաշրջանին ընդառաջ լույս տեսած "Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով (կոմպոզիտորի ծննդյան 150-ամյակի առթիվ)" եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատկերագրքի շնորհանդեսը: Աշխատության մեջ հայ արվեստաբանության ոլորտում առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրվել ու լայնորեն ներկայացվել է Կոմիտասի կերպարը հայ նկարիչների և քանդակագործների ստեղծագործություններում: Պատկերագրքում ներկայացված ստեղծագործություններն ունեն ինչպես գեղարվեստական ակնհայտ արժանիքներ, այնպես էլ պատմամշակութային ու վավերագրական կարևոր նշանակություն: Գրքի պատասխանատու խմբագիրն է Աննա Ասատրյանը, ով նաև առաջաբանի հեղինակն է:*

Շնորհանդեսի ընթացքում՝ հեղինակի խոսքից հետո, պատկերագրքի մասին կարծիքներ հայտնեցին Աննա Ասատրյանը, Ալլիտա Դոլուխանյանը, Լիլիթ Երնջակյանը, Աննա Արևշատյանը, Անուշավան Զաքարյանը և Լուսինե Սահակյանը*:*

Գիտական նստաշրջանը եզրափակվեց դեկտեմբերի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած հոբելյանական համերգով, որին մասնակցեցին Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ Հովհ. Չեքիջյանի ու Ս. Սմբատյանի ղեկավարությամբ:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ